Մուտավակկիլ ուղարկեց Բուղայ մեծին։ Երբ նա Աղձնիք եկաւ, նորան ներկայացաւ Մուսայ ի. Զուրար, որ տիրել էլ Բիթլիսին, իրան ապահովութիւն շնորհելու խնդրանօք. սակայն Բուղայ կապանքների մէջ դրեց նորան եւ ուղարկեց Մուտավակկիլի մօտ։ Այնտեղից նա գնաց Աղբակ կոչուած գաւառը եւ պաշարեց Աշոտ որդի Համզայի. ապա ներեց նորան եւ ուղարկեց Սամառայ, ուր նորան գլխատել եւ խաչել տուեց հասարակաց դռան հանդէպ։

Բուղայ գրեց Խահակ ի. Իսմայէլին, որ տիրել էր Տփղիսին, նորա մօտ գալ. սակայն Խահակ պատասխանեց, որ նա Սուլթանի հնազանդութիւնից դուրս եկած չէ. եթէ նա ինչք կամի, նա ինչքով կարող է նորան օգնել, իսկ եթէ նա (ռազմիկ) մարդ կամի, նա մարդիկ կ'ուղարկէ նորա մօտ, եւ թէ նա անկարող եղաւ նորա մօտ գալու։ Բուղայ արշաւեց նորա վերայ, ճակատեցաւ, յաղթեց նորան եւ կտրել տուեց նորա գլուխը, որ նա ուղարկեց Սուլթանին։

Բուղայ արշաւեց Ծանարայ վերայ եւ պատերազմեցաւ նոցա հետ, սակայն Ծանարք ի փախուստ դարձրին եւ հալածեցին նորան. Բուղայ փախստեամբ ապրեցաւ նոցանից եւ սկսեց հալածել այն բնակիչներին, որոնց նա ապահովութիւն էր շնորհել, կոտորելով նոցանից մեծ բազմութիւն։ Սոքա դիմեցին Յունաց կայսեր, Խազարայ խաքանին եւ Ալաւոնացոց իշխաններին, որոնք մեծ բազմութեամբ միասին գումարեցան։ Բուղայ տեղեկացրեց այս բանի մասին Մուտավակկիլին, որ նշանակեց երկրի վերայ Մուհամմադ ի. Խալիդ ի. Եզիդ ի. Մազեադ Շայբանիին։ Նորա գալովն խռովարարները հանգստացան, ստանալով նորանից (կեանքի) ապահովութիւն։

249 թ. Մուստա'ին ամիրապետը դրեց հայաստանցի Ալի ի. Եահեա'ին Հայաստանի վե-